ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույնով ներկայացնում ենք ՀՀ արդարադատության նախարարության հեղինակած և ՀՀ կառավարության 18.01.2018թ. նիստով հաստատված «Հանրային խորհրդի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ԹԻՀԿ առաջարկությունները:

1) **Հոդված 3. Հանրային խորհրդի գործառույթները**

1.1 Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանրային խորհուրդն իր առջև դրված խնդիրների կենսագործման նպատակով հանրային լսումներ, քննարկումներ կամ օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնում է վարչապետի առաջարկությամբ կամ սեփական նախաձեռնությամբ:

Ընդունելով հանդերձ, որ Հանրային խորհուրդը սահմանադրաիրավական կարգավիճակով համարվում է Կառավարության խորհրդակցական մարմինը, այդուհանդերձ, հանրության և Կառավարության միջև միջնորդ օղակ լինելու նրա առաքելությունը հաշվի առնելով՝ սահմանափակ ենք համարում միայն նախագծով սահմանված դեպքերում լսումների կամ քննարկումների կազմակերպումը՝ բացառելով հանրային պահանջը, որպես հիմք: Հանրային խորհուրդն օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում պարտավոր է անհապաղ արձագանքել հանրային հնչեղություն ունեցող հարցերին և դրանք դարձնել իր քննարկման առարկան: Հետևաբար, անհրաժեշտ է սահմանել մեխանիզմ (օրինակ՝ ոլորտային ՀԿ-ներից կամ շահագրգիռ անձանցից ստացված դիմումներ, կամ ստորագրությունների որոշակի քանակով ապահովված դիմում և այլն) 3-րդ անձի (անձանց) դիմումի հիման վրա Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գործառույթներն իրականացնելու համար:

Առաջարկություն – սահմանել 3-րդ անձի դիմումի հիման վրա Հանրային խորհրդի կողմից՝ օրենքով սահմանված գործառույթների իրականացման մեխանիզմ:

1.2 Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հանրային խորհուրդն իր եզրակացությունը *կարող է* տեղադրել իր պաշտոնական համացանցային կայքում:

Այս ձևակերպմամբ խորհրդին տրվում է լայն հայեցողություն իր եզրակացությունների հրապարակայնությունն ապահովելու հարցում, ինչն անընդունելի է: Խորհրդի գործունեության

թափանցիկության ապահովման նպատակով եզրակացությունների հրապարակման պահանջը պետք է լինի իմպերատիվ:
Բացի այդ, Նախագծի 6-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Հանրային խորհուրդն ընդունում է որոշումներ, որոնք կարող են լինել առաջարկությունների կամ եզրակացությունների ձևով: Սակայն հրապարակման պահանջը (այն էլ՝ հայեցողական) վերաբերում է միայն եզրակացություններին, ինչը նշանակում է, որ խորհրդի առաջարկությունները որևէ կերպ հասանելի չեն հանրությանը: Մինչդեռ Հանրային խորհրդի խնդիրներից է, օրինակ՝ «պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցությանը նպաստելը, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության զարգացման քաղաքականության առաջնահերթությունների վերաբերյալ Կառավարությանն առաջարկությունների ներկայացումը» (Նախագիծ, հոդված 2, մաս 1, կետ 2): Բայց եթե դրանք չեն հրապարակվում, ստացվում է, որ նույն այդ քաղաքացիական հասարակությունը տեղեկացված չէ ներկայացված առաջարկությունների վերաբերյալ, ինչը նշանակում է տեղեկատվության ազատության սահմանափակում:

Առաջարկություն – ամրագրել Հանրային խորհրդի որոշումների՝ եզրակացությունների և առաջարկությունների պարտադիր հրապարակման պահանջ:

2) Հոդված 6. Հանրային խորհրդի գործունեության կարգը

Նախագծի 6-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ Հանրային խորհրդի նիստերը դռնբաց են, եթե Հանրային խորհուրդը նիստերը դռնփակ անցկացնելու մասին որոշում չի կայացնում:

Նախագծի քննարկվող դրույթը չի ապահովում խորհրդի գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը, քանի որ խորհրդին տրվել է հայեցողական լիազորություն նիստերը դռնփակ անցկացնելու համար՝ առանց կոնկրետ չափորոշիչների: Օրենսդրորեն պետք է ամրագրել ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ այն հիմքերը, որոնց դեպքում միայն իրավաչափ կլինի նման սահմանափակում մտցնելը: Դռնփակ նիստն անցկացնելը չպետք է լինի ինքնանպատակ, հետևաբար, անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ հանրային շահ է պաշտպանվում այսպիսի սահմանափակմամբ:

Առաջարկություն – ամրագրել Հանրային խորհրդի նիստերը դռնփակ անցկացնելու օրենսդրական հիմքերը: